



**Կարգապահական գործ թիվ ԿԳ-21011**

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի խորհրդի  
2021թ-ի սեպտեմբերի 14-ի թիվ 289-րդ ԿԳ նիստի

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**  
**ԹԻՎ ԿԳ/171-Ա**

**ՓԱՍՏԱԲԱՆ ԱՆԺԵԼՅԱ ՎՈԼՈՂՅԱՅԻ ՀՈՐՈՍՅԱՆԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ  
ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՀԱՐՑԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

ՀՀ փաստաբանների պալատի խորհուրդը (**այսուհետ նաև՝ Խորհուրդ**), նիստը նախագահող՝ Խորհրդի անդամ Արսեն Հարությունյանի, Խորհրդի անդամներ՝ Հարություն Հարությունյանի, Կարեն Սարգսյանի, Կարեն Մեծլումյանի, Ռուբեն Հակոբյանի, Պավել Գյուլումյանի, Գայանե Դեմիրջյանի կազմով,  
քարտուղարությամբ՝ Աստղիկ Գևորգյանի,  
քննության առնելով փաստաբան Անժելյա Վոլոդյայի Հոբոսյանին (արտոնագիր՝ 52) կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ հարցը՝

**Պ Ա Ր Ձ Ե Ց՝**

**1. Կարգապահական վարույթ հարուցելու առիթը և հիմքը.**

ՀՊԳ ղեկավար Մելանյա Առուստամյանը (**այսուհետ նաև՝ Դիմող**) դիմելով Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատ (**այսուհետ՝ նաև Պալատ**), հայտնել է, որ 2021թ. մարտի 29-ին ՀՊԳ է ստացվել ՀՀ վճռաբեկ դատարանի 2021թ. մարտի 24-ի որոշումը՝ ՀՀ վերաքննիչ դատարանի 2021թ. հունվարի 18-ի որոշման դեմ հանրային պաշտպան Անժելյա Հոբոսյանի վճռաբեկ բողոքն առանց քննության թողնելու մասին:

Համաձայն միջնորդության՝ ՀՀ վճռաբեկ դատարանի որոշման ուսումնասիրությամբ պարզվել է, որ Անժելյա Հոբոսյանն իր պաշտպանյալ Աշոտ Ստեփանյանի վերաբերյալ քրեական գործով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի կողմից 2021թ. հունվարի 18-ին կայացված որոշման դեմ դեռևս 2021թ. փետրվարի 04-ին ներկայացրել է վճռաբեկ բողոք: ՀՀ վճռաբեկ դատարանը նշված բողոքը 2021թ. փետրվարի 26-ի որոշմամբ վերադարձրել է՝ սահմանելով 10-օրյա ժամկետ՝ վճռաբեկ բողոքի ձևական սխալները շտկելու և այն կրկին ներկայացնելու համար: Անժելյա Հոբոսյանը 2021թ. մարտի 10-ին կրկին ներկայացրել է վճռաբեկ բողոք, որի առնչությամբ ՀՀ վճռաբեկ դատարանը կայացրել է 2021թ. մարտի 24-ի որոշումը՝ վճռաբեկ բողոքն առանց քննության թողնելու մասին՝ արձանագրելով, որ Անժելյա Հոբոսյանը չի վերացրել վճռաբեկ դատարանի 2021 թվականի փետրվարի 26-ի որոշմամբ արձանագրված

ձևական սխալը, այն է՝ «վճռաբեկ բողոքում բացակայում են վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելու վերաբերյալ հիմքերը և դրանց հիմնավորումները: (...)»

Ներկայացնելով վերոգրյալը՝ Դիմողը պնդել է, որ հանրային պաշտպանի գործողությունների արդյունքում նրա պաշտպանյալ Աշոտ Ստեփանյանը զրկվել է ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորված դատական պաշտպանության իրավունքից, որը դրսևորվել է իր նկատմամբ կիրառված խափանման միջոցի վերաբերյալ որոշումը ՀՀ վճռաբեկ դատարանի կողմից վերանայելու իրավունքը չիրացնելով:

Ըստ Դիմողի՝ Անժեյա Հոբոսյանը խախտել է «Փաստաբանի վարքագծի կանոնագրքի» պահանջները՝ վերջինիս գործողությունները դիտարկելով իր պաշտպանյալին բարեխիղճ իրավաբանական օգնություն չտրամադրելու, գիտելիքները շարունակաբար չկատարելագործելու և անձեռնհասության համատեքստում:

Վերոգրյալը հաշվի առնելով Դիմողը միջնորդել է կարգապահական վարույթ հարուցել հանրային պաշտպանի նկատմամբ:

## **2. Կարգապահական վարույթ հարուցելու մասին որոշումը.**

Պալատի նախագահի 23.04.2021թ. թիվ 79-Ա/ԿԳ-21011 որոշման հիման վրա փաստաբան Անժեյա Հոբոսյանի նկատմամբ հարուցվել է կարգապահական վարույթ՝ «Փաստաբանության մասին» օրենքի (**այսուհետ՝ նաև Օրենք**) 19-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերի, ինչպես նաև Պալատի ընդհանուր ժողովի կողմից 19.10.2019 թվականի թիվ 1-Լ որոշմամբ նոր խմբագրությամբ հաստատված Փաստաբանի վարքագծի կանոնագրքի (**այսուհետ՝ Փաստաբանի վարքագծի կանոնագիրք կամ Կանոնագիրք**) 2.7.1, 2.7.2 և 3.5.5 ենթակետերի պահանջների խախտման հատկանիշներով:

28.04.2021թ. կարգապահական գործը հանձնվել է կարգապահական գործը նախապատրաստող անձ Հովհաննես Փարսադանյանին (**այսուհետ նաև՝ Նախապատրաստող**):

## **3. Դիմողի և Փաստաբանի համառոտ բացատրությունները, վկաների ցուցմունքները.**

### **3.1. Դիմողի համառոտ բացատրությունները.**

Գործի նախապատրաստման ընթացքում Դիմողը ներկայացրել է բացատրություն, որով պնդել է Դիմումով իր հայտնածը:

Դիմողը թեև պատշաճ ծանուցվել էր կարգապահական նիստի վայրի, օրվա և ժամի մասին, սակայն Խորհրդի նիստին չի ներկայացել:

### **3.2 Փաստաբանի համառոտ բացատրությունները.**

Գործի նախապատրաստման ընթացքում Փաստաբանը ներկայացրել է բացատրություն և հայտնել հետևյալը՝

Փաստաբան Անժեյա Հոբոսյանի կողմից ներկայացված բացատրությունը Պալատում մուտքագրվել է 22.04.2021 թվականին: Բացատրությամբ փաստաբանը հայտնել է, որ կրկին ներկայացված վճռաբեկ բողոքում դրա հիմքերն ու հիմնավորումները ներկայացրել է սպառիչ՝ հիմքում դնելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի նորմերի խախտումները, ՀՀ վճռաբեկ դատարանի նախադեպային որոշումները և իր պաշտպանյալ Աշոտ Ստեփանյանին կալանքի տակ պահելու անթույլատրելիությունը

հիմնավորող փաստաթղթերը: Բողոքի մեջ չի նշել միայն վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելու հիմքերն ու հիմնավորումները սահմանող նորմը, որը պայմանավորել է շտապողականությամբ: Նշել է, որ ՀՀ վճռաբեկ դատարանը հայեցողական մոտեցում է ցուցաբերել բողոքն առանց քննության թողնելու հարցում:

Հավելել է, որ պատշաճ ծավալով իրավաբանական օգնություն է ցուցաբերել Աշոտ Ստեփանյանին՝ այդ նպատակով ներկայացնելով մի շարք փաստարկներ:

Փաստաբան Անժելյա Հոբոսյանը նաև ներկայացել է կարգապահական նիստին և պնդել բացատրությամբ իր հայտնաձևը:

### **3.3 Սույն կարգապահական գործով վկաներ չեն հրավիրվել:**

#### **4. Կարգապահական գործ նախապատրաստողի եզրակացությունը, եզրակացության վերաբերյալ առարկությունները և գործի հանձնումը խորհրդին.**

Կարգապահական գործի նախապատրաստման արդյունքում Նախապատրաստողը 21.05.2021թ. կազմել է եզրակացություն:

Նախապատրաստողի եզրակացության վերաբերյալ Փաստաբանն առարկություն չի ներկայացրել:

Կարգապահական գործը խորհրդին է հանձնվել 31.05.2021թ.

Խորհրդի նիստը տեղի է ունեցել 14.09.2021թ. ժամը 19:30-ին, ՀՀ փաստաբանների պալատի վարչական շենքում (ք.Երևան, Զաքյան 7-2, 4-րդ հարկ, թիվ 12 սենյակ):

#### **5. Գործի հանգամանքները՝ առկա ապացույցների վկայակոչմամբ.**

Պալատի ընդհանուր ժողովի կողմից 19.10.2019 թվականի թիվ 1-Լ որոշմամբ նոր խմբագրությամբ հաստատված Փաստաբանի վարքագծի կանոնագրքի հավելվածը հանդիսացող «Փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման» կարգի (**այսուհետ նաև՝ Կարգ**) 3.10.3 ենթակետի համաձայն՝ *Պալատի խորհուրդը հիմք է ընդունում Նախապատրաստողի եզրակացությամբ հաստատված փաստերը, բացառությամբ այն դեպքի, երբ գործում գտնվող ապացույցները կամ Պալատի խորհրդին ներկայացված լրացուցիչ ապացույցները՝ սույն կարգին համապատասխան գնահատելու արդյունքում Պալատի խորհուրդն այլ եզրահանգման է գալիս:*

Խորհուրդը, ուսումնասիրելով գործում առկա ապացույցները, հաշվի առնելով նաև կարգապահական գործը նախապատրաստողի եզրակացությունը, հաստատված է համարում հետևյալ փաստերը.

1. 04.02.2021 թվականին փաստաբան Անժելյա Հոբոսյանը վճռաբեկ բողոք է ներկայացրել: (Սույն փաստն ապացուցվում է 04"02.2020թ. վճռաբեկ բողոքի պատճենով):

2. Վճռաբեկ դատարանը 2021 թվականի փետրվարի 26-ի որոշմամբ վերադարձրել է՝ փաստաբանի ներկայացրած վճռաբեկ բողոքը սահմանելով 10-օրյա ժամկետ՝ վճռաբեկ բողոքի ձևական սխալները շտկելու և այն կրկին ներկայացնելու համար: (Սույն փաստն ապացուցվում է 26.02.2021թ. որոշման պատճենով):

3. Ա.Հոբոսյանը 2021 թվականի մարտի 10-ին կրկին ներկայացրել է վճռաբեկ բողոք: (Սույն փաստն ապացուցվում է 10.03.2021թ. վճռաբեկ բողոքի պատճենով):

4. 24.03.2021 թվականին Վճռաբեկ դատարանը կայացրել է վճռաբեկ բողոքը

առանց քննության թողնելու վերաբերյալ որոշում: (Սույն փաստն ապացուցվում է 24.03.2021թ. որոշման պատճենով):

**6. Փաստաբանի անձը բնութագրող հանգամանքները.**

Պալատի ընդհանուր դեպարտամենտի ղեկավարի կողմից տրամադրված տեղեկանքի համաձայն՝ փաստաբան Անժեյա Հոբոյանը փաստաբանական գործունեության արտոնագիրն ստացել է 10.11.1997թ., և 2017-2021թթ. ընկած ժամանակահատվածում վերջինիս նկատմամբ 2 անգամ հարուցվել է կարգապահական վարույթ (չհաշված սույն կարգապահական վարույթը):

**7. Պալատի խորհրդի պատճառաբանված եզրակացությունը և որոշումը.**

**Պալատի խորհուրդը գտնում է, որ փաստաբան Անժեյա Հոբոյանի նկատմամբ հարուցված կարգապահական վարույթը ենթակա է կարճման՝ հետևյալ պատճառաբանությամբ:**

**Կանոնագրքի 2.7.1 ենթակետի համաձայն՝** Փաստաբանական գործունեության հասարակական-իրավական նշանակությունը փաստաբանից պահանջում է բարձր մասնագիտական պատրաստվածություն, օրենսդրության իմացություն և գործնական փորձ, փաստաբանական գործունեության մարտավարության մեթոդների և միջոցների, ինչպես նաև հռետորական արվեստի տիրապետում:

**Կանոնագրքի 2.7.2 ենթակետի համաձայն՝** Փաստաբանը պարտավոր է վստահորդին բարեխիղճ իրավական օգնություն ցույց տալ իր մասնագիտական կարողությունների սահմաններում, ինչը ենթադրում է իրավունքի համապատասխան ճյուղի իմացություն, վստահորդի հանձնարարությանը վերաբերող բոլոր հանգամանքների ուսումնասիրություն, հանձնարարության պատշաճ կատարման համար անհրաժեշտ գործողությունների կատարում:

**Կանոնագրքի 3.5.5 ենթակետի համաձայն՝** Փաստաբանը պարտավոր է վստահորդին իրավաբանական օգնություն ցույց տալիս իր մասնագիտական պարտականությունները կատարել ողջամտորեն, բարեխղճորեն, որակավորված, սկզբունքայնորեն և ժամանակին, ինչը ներառում է՝

ա. նյութերի ուսումնասիրությունը,

բ. վերաբերելի իրավական ակտերի ուսումնասիրությունը,

գ. վստահորդին վերջինիս հանձնարարության կատարման կապակցությամբ հնարավոր իրավական հետևանքների առաջացման մասին իրազեկումը,

դ. վստահորդի հանձնարարության պատշաճ կատարման համար անհրաժեշտ գործողությունների կատարումը:

Վերլուծելով նշված կանոնները՝ Պալատի խորհուրդը գտնում է, որ սույն գործի

փաստերի լույսի ներքո անհրաժեշտ է դրանք դիտարկել համակցության մեջ:

Նշված կանոններով փաստաբանի համար սահմանվում են պարտականություններ, այն է՝ փաստաբանը պարտավոր է ելնել վստահորդի նպաստավոր շահերից և բարեխղճորեն և ժամանակին պաշտպանել վստահորդի իրավունքներն ու օրինական շահերը, ունենալ բարձր մասնագիտական պատրաստվածություն:

Սույն գործով հաստատված է, որ Անժեյա Հոբոսյանն իր պաշտպանյալ Աշոտ Ստեփանյանի վերաբերյալ քրեական գործով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի կողմից 2021թ. հունվարի 18-ին կայացված որոշման դեմ դեռևս 2021թ. փետրվարի 04-ին ներկայացրել է վճռաբեկ բողոք: ՀՀ վճռաբեկ դատարանը նշված բողոքը 2021թ. փետրվարի 26-ի որոշմամբ վերադարձրել է՝ սահմանելով 10-օրյա ժամկետ՝ վճռաբեկ բողոքի ձևական սխալները շտկելու և այն կրկին ներկայացնելու համար: Անժեյա Հոբոսյանը 2021թ. մարտի 10-ին կրկին ներկայացրել է վճռաբեկ բողոք, որի առնչությամբ ՀՀ վճռաբեկ դատարանը կայացրել է 2021թ. մարտի 24-ի որոշումը՝ վճռաբեկ բողոքն առանց քննության թողնելու մասին որոշում:

**Կարգի 3.3.1 ենթակետի համաձայն՝ կողմերից յուրաքանչյուրը պետք է ապացուցի իր վկայակոչած փաստերը:**

**Կարգի 3.3.5 ենթակետի համաձայն՝ եթե բոլոր ապացույցների հետազոտումից հետո վիճելի է մնում փաստի առկայությունը կամ բացակայությունը, ապա դրա բացասական հետևանքները կրում է այդ փաստի ապացուցման պարտականությունը կրող կողմը:**

Կարգի նշյալ իրավադրույթներից հետևում է, որ կարգապահական վարույթի կողմերից յուրաքանչյուրը՝ թե՛ դիմողը և թե՛ պատասխանողը, պետք է ներկայացնեն իրենց անդումների և ներկայացված փաստարկների ապացույցներն ու հիմնավորումները, իսկ Պալատի խորհուրդը, իրականացնելով կարգապահական գործի լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի քննություն, իրավական գնահատական է տալիս դրանց: Ընդ որում, իրենց վկայակոչած փաստերը հիմնավորող ապացույցներ չներկայացնելու կամ ոչ բավարար ապացույցներ ներկայացնելու բացասական հետևանքները կրում են կողմերը՝ յուրաքանչյուրն իր վկայակոչած փաստի կամ փաստերի մասով:

Սույն գործով, ՀՀ փաստաբանների պալատի խորհուրդին փաստաբանը հայտնել է, որ կրկին ներկայացված վճռաբեկ բողոքում դրա հիմքերն ու հիմնավորումները ներկայացրել է սպառիչ՝ հիմքում դնելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի նորմերի խախտումները, ՀՀ վճռաբեկ դատարանի նախադեպային որոշումները և իր պաշտպանյալ Աշոտ Ստեփանյանին կալանքի տակ պահելու անթույլատրելիությունը հիմնավորող փաստաթղթերը: Բողոքի մեջ չի նշել միայն վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելու հիմքերն ու հիմնավորումները սահմանող նորմը:

Վերոնշյալ հիմք ընդունելով Խորհուրդն արձանագրում է, որ փաստաբանի կողմից 2.7.1, 2.7.2 և 3.5.5 ենթակետերի խախտում թույլ տալու փաստը չի հաստատվել, քանի որ վերջինիս կողմից ներկայացված վճռաբեկ բողոքի բովանդակության վերլուծության արդյունքում չի ապացուցվել այն փաստը, որ վերջինիս կողմից ներկայացված վճռաբեկ

բողոքը չի համապատասխնել ՀՀ օրենսդրությանը, մասնավորապես չի ապացուցվել վարույթ ընդունելու հիմքերն ու հիմնավորումները սահմանող նորմը չնշելը հանդիսացել է վճռաբեկ բողոքը առանց քննության թողնելու պատշաճ հիմք:

**Կարգի 7.2.6 ենթակետի համաձայն՝** Կարգապահական խախտման փաստը ապացուցված լինելու վերաբերյալ բոլոր կասկածները, որոնք չեն կարող փարատվել Օրենքի և սույն կարգի դրույթներին համապատասխան պատշաճ իրավական ընթացակարգի շրջանակում, մեկնաբանվում են հօգուտ Պատասխանողի:

Սույն պարագայում Պալատը հաստատված է համարում, որ Դիմողը չի ներկայացրել որևէ ապացույց, որը կվկայեր փաստաբանի կողմից վերոնշյալ վարքագծի կատարումը, հետևաբար Դիմողը պետք է կրի հավելյալ ապացույց չներկայացնելու բացասական հետևանքը, իսկ չփարատված կասկածները պետք է որակվեն փաստաբանի օգտին:

**Նկատի ունենալով, որ նշված փաստերը չեն հաստատվել, Խորհուրդն փաստաբանի վարքագիծը չի համարում Կանոնագրքի 2.7.1, 2.7.2, և 3.5.5 ենթակետերին հակասող, ուստի Փաստաբանի նկատմամբ հարուցված կարգապահական վարույթը ենթակա է կարճման:**

Ելնելով վերոշարադրյալից և ղեկավարվելով Օրենքի 10-րդ հոդվածի, 39-րդ, 39.7 և 39.8 հոդվածների պահանջներով՝

Խորհուրդը

## **Ո Ր Ո Շ Ե Ց՝**

**1. Փաստաբան Անժեյա Վոլոդյայի Հորոսյանի (արտոնագիր՝ թիվ 52) նկատմամբ հարուցված կարգապահական վարույթը կարճել:**

**2. Հանձնարարել Պալատի աշխատակազմի ղեկավարին՝ սույն որոշման մասին իրազեկել Դիմողին և փաստաբան Անժեյա Վոլոդյայի Հորոսյանին:**

Ծանոթություն. Սույն որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով՝ այն ստանալու օրվանից մեկամսյա ժամկետում: Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում սույն կետով նախատեսված բողոքարկման ժամկետն անցնելուց հետո:

ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի  
կարգապահական գործով  
նիստը նախագահող՝

Արսեն Հարությունյան

**14 սեպտեմբերի 2021թ.  
թիվ ԿԳ/171-Ա  
ք. Երևան**